

ՏԱՋԱՐ



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԿՐԾՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՅԵՕՐԷՆ-ԵՄԲԱԴԻՐ
ԶԱՐՄԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԵԶԻՐԵԱՆ

Բ. ՏԱՐԻ

« ՇԱԲԱԹ, 7 ՄԱՅԻՍ 1911 »

ԹԻԻ 17

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ. — Բարեգործելու լաւագոյն կերպը
Ս. ԳԻՐԳԷՆ ՅՈՒՔԵՐ. «Սիրեմս զիս»
Հայ լեզուն հինգերորդ եւ քսաներորդ դարերուն
ԾԱԳՈՒՄՆ ԴԲՐ. ՄԱՐԳԱՐԷՈՒԹԵԱՆ. — (Ա.) Մովսէս եւ
Դերովրա
ՕՏԱՐ ԷԶԵՐ. — Աստուծոյ ստորոգելիները (Թարգմ.)
Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութիւն (բանախօսութիւն եր.
Աղաթօն պէյի)
ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ, — Շաբթուան Լուրեր

ԶԱՐՄԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ
ՍՈՒՐԷՆ Ծ. Վ. ԳԱԼԷՄԵԱՆ
ԴԱԶՐԻԿ
ԴԷՈՐԳ-ՄԵՍՐՈՊ
Մ. Հ. ԱԼԱՃԱՃԵԱՆ



Տպագր. Ց. ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆ

Սուրբան-Համաւ Մօլա-Թաշը, Թիւ 16

Կ. ՊՈԼԻՍ

“ՏԱՃԱՐ”Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԵՐԸ

Պոլսոյ եւ Գաւառացի տարեկան	40 դրու
Արսասանմանի համար	» 10 ֆրանկ
Ռուսիա	» 4 ռուբլի
Ամերիկա	» 2 օշլար
Ձեռքէ կը ծախուի պրակը	40 փարա

Հինգ բաժանորդ գտնողը իրաւունք ունի մէկ թերթ ձրի ստանալու

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԵՐԸ ԿԱՆԽԻԿ ԵՆ
ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՆ ԴԻԻՐԱՄԱՏՁԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

«ՏԱՃԱՐ»-ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է շրմել առ Զարմայր Բաճանայ Կեզուրեան, Կ. Պոլիս, Պեշկեքաւ, Հայոց եկեղեցի:

بشيكطاش ارمنى كليسانده «داجار» غرضه سى مديرى پاپاس زارماير افندى

Rev. Père Zarmair Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿՐՕՆԱԹԵՐԹ

ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջն. Փոխա-
նորդ Տ. Արսէն Բէնյ. Դերձակեան
ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ. — Տ. Ռուբէն Բէնյ. Դա-
բիկեան
ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Պօ-
ղոս Վրդ. Դափթանեան
ԱՅՆԹԱՊ. — Տ. Դարեղին Բէնյ. Պողար-
եան
ԱՅԻՕՆ ԳՐԱՆԱԼԻՍԱՐ. — Տ. Խաչատուր
Ա. Բէնյ. Տօնէլեան
ԲԱՐԵՐԴ. — Մ. Սանոսեան էֆ.
ԴԱՂԱՏԻԱ. — Առաջնորդ Տ. Բաբգէն Եպս.
Կիւլլսէրեան
ԴԱՀԻՐԷ. — Տ. Յարութիւն Բէնյ. Սար-
գիսեան
ԵՕՋՂԱՏ. — Առաջնորդ Տ. Խորէն Մ. Վրդ.
Դիմաքսեան
ԵՐՋՆԿԱ. — Տ. Մեարոպ Բէնյ. Թորոսեան
ՉՄԻԻՆԻԱ. — Տ. Յարութիւն Բէնյ. Տ.
Սարգսեան
ԷՍԿԻՇԷՀԻՐ. — Տ. Դալուստ Բէնյ. Տ.
Դալուստեան
ԿԱՐԻՆ. — Առաջնորդ Տ. Սափատ Եպիսկ.
Սաատէթեան
ԿԻՐԱՍՈՆ. — Մաթոս էֆ. Թորքապեան
ԿԻՐՄԻԻԼԺԻՆԷ. — Տ. Ներսէս Բէնյ.
Նշանեան

ՄԱՐԱՇ. — Տ. Հմայեակ Բէնյ. Վարժ-
պետեան
ՄԱՐՁՈՒԱՆ. — Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՄԻԴԻԱ. — Տ. Ոսկի Բէնյ. Պիպիեան
Շ. ԴԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Նաթան Բէնյ.
Տառեան
ՈՒՇԱՔ. — Կարապետ էֆ. Բէնեանեան
ՊԱՆՏՐՄԱ. ՊԱԼԸՔԷՍԻՐ. — Առաջնորդ Տ.
Կարապետ Եպիսկ. Մազլըմեան
ՊԱՂՏԱՏ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ս.
Եպիսկ. Կէօմբիւքեան
ՌՈՒՍՃՈՒՔ. — Տ. Մկրտիչ Բէնյ. Մըրջ-
նիկեան
ՌՈՏՈՍԹՕ. — Առաջնորդ. Տ. Դէորդ Մ.
Վրդ. Աւանեան
ՍԱՄՍՕՆ. — Առաջնորդ Տ. Սահակ Մ. Վ.
Օտապաշեան
ՍԵՐԱՍԻԱ. — Առաջն. Փոխանորդ Տ.
Թէոփիլէ Բէնյ Օտապաշեան.
ՍԵԼԱՆԻԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-
պետ Բէնյ. Թուսմանեան
ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիոնիսիոս Բէնյ. Տրէզ-
եան
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մովսէս-
եան
ՏԻՄԷԹՕԳԱ. — Տ. Դէորդ Բէնյ. Թէրգեան
ՓԱՐԻՋ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վառմշա-
պուհ Բէնյ. Բիպարեան
ՔՂԻ. — Առաջնորդ Տ. Պսակ Վրդ.
ՖԻԼԻՊԷ. — Տ. Տաճատ Բէնյ. Դերձակեան
ՖՐԷՋՆՕ. — Յակոբ էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԿՐԾՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 7 ՄԱՅԻՍ 1911

ԹԻԻ 17

ԿՐԾՆԱԿԱՆ

ԲԱՐԵԳՈՐԾԵԼՈՒ ԼԱՒԱԳՈՅՆ ԿԵՐՊԸ

Հայ ազգը իր ամէնէն վեհագի, ազնուասիրտ մէկ զաւակը կորսնցուց Պ. Ա. Մանթաշեանի մահուամբ: Անցեալ շաբթու համառօտ տողերու մէջ կը ջանայինք ամփոփել իր մեծ բարեգործութիւնները. ու մենք կը կարծենք թէ այդ չոր թուանշանները շատ աւելի պերճախօս են քան ամէնէն ճոռոմ քարոզները կամ խմբագրականները:

Պ. Ա. Մանթաշեան եւ իր գործը վեր են ամէն գովեստէ, ինչպէս վեր կը մնան ամէն խճրճանքէ, որքան ալ սրամիտ գրողներէ յայտնուին^(*): Ռու-

(*) Զարմացաւառն ցաւով կարդացինք անցեալ օր Սերժի մը մէջ հատուած մը, ուր հանգուցեալ միլիոնատէրը կը ներկայացուէր իրր տգէտ եւ կոպիտ մարդ մը, որ չկրնայով իր անձնական արժանիքովը պարծենալ, այդ պարծանքը փնտռած է բարեգործութեան մէջ, եւ ասով իր շուրջը ստեղծած է շողմարար պնակալէզներու շքախումբ մը... Եւ, եւ: Գոնէ մահուան հանդէպ բարեկիրթ ըլլալ չենք գիտեր, աւա՛ղ: Մեծ բարերարներու հանդէպ երախտագիտութիւնը ազգային առաքինութիւն մը չէ դժբախտաբար:

սահայ միլիոնատէրը Ազգին ամէն կարգի պէտքերուն գոհացում տալու ջանադիր եղած է: Եկեղեցին, դպրոցը ուսանողութիւնը, կարօտեալները, սովեալները լիաբուռն վայելած են իր նպաստները, եւ մարդ հիացումի զգացում միայն կրնայ ունենալ այդ բարեսիրտ մարդուն նկատմամբ, որ զարգացումի բարձր աստիճան մը չունենալով հանդերձ, կրցած է սքանչելի տիպար մը դառնալ ինքնօգնութեան, միեւնոյն ատեն գեղեցիկ օրինակ մը՝ բարեգործ ու բարեպաշտ Հայու:

Առիթը նպաստաւոր է, ուրեմն, խօսելու քիչ մը բարեգործութեան վրայ, որ այնքան յաջողապէս մշակուած տունկ մը չէ մեր մէջ, եւ որու մշակութեան հոգ տանողներ՝ երբեմն՝ անգիտակից պատճառներ կը դառնան այդ արդէն ազազուն տունկը արմաւ տէն չորցնելու:

Մենք տեսած ենք հորահաս երիտասարդներ, սկզբամբ ազնիւ սրտի տէր, որոնք սակայն հեզնութեան, ծաղրի ժպիտ մը կ'ուրուագծեն իրենց շրթունքին վրայ, ամէն անգամ որ վանքի մը, եկեղեցիի մը նուիրատուութեան

Թիւն կ'ըլլայ բարեպաշտ հոգիի մը կողմէ : Ճանչցած ենք հրապարակագիրներ, որոնք կը քննափետեն Գրիս. տոնէական զգացումի տէր մեծատուն մը, եկեղեցի մը կառուցանել տուած ըլլալուն համար իր անձնական ծախքով : Վերջապէս առիթ ունեցած ենք լսելու միշտ քննադատութիւններ, ամէն անգամ որ եկեղեցիի սլաքառութեան հոգ տանելու ջանքեր կ'ըլլան էապէս կրօնասէր Հայերու կողմէ :

— Աւելի լաւ չէ՞ր ըլլար որ, կ'ըսեն այդ քննադատները, եկեղեցիի շէնք մը կառուցանելու, դպիրներու փառաւոր շապիկներ շինելու, եւ վերջապէս այդ կարգի լոկ հոգեւոր նպատակներու համար ծախսուած դրամը յատկացուէր դպրոց մը շինելու, աղքատիկ տղոց դաստիարակութեան հոգ տանելու, կրթական գործին զարկ տալու վերջապէս :

Ու մեկամաղձոտ շեշտով մը կ'աւելցնեն այդպիսիները, ճշմարիտ, անկեղծ տխրութեամբ մը .

— Ո՛րքան յետադէմ գաղափարներու տէր են մեր հարուստները :

Ճշմարտութիւն կայ այս քննադատութեանց մէջ :

Քսաներորդ դարը նոր եւ հարկեցուցիչ պէտքեր յառաջ բերած է : Իրապէս, ա՛լ անցած է ժամանակը մի միայն եկեղեցիի եւ հոգեւոր պաշտամունքի մէջ փնտռելու ազգի մը յառաջդիմութեան գաղափարը : Հացի սլաքարը, ներկայ դարուն եւ մասնաւորապէս Թուրքիոյ մէջ այնքան սաստկացած, առաւել քան երբեք սարտադիր կ'ընեն զմեզ լրջօրէն փնտռելու Հայուն իմացական եւ անտեսական հիմնաւոր զարգացման միջոցները, կարող ըլլալու համար լաւագոյն դիրք մը գրաւելու Թուրքիոյ բաղկացուցիչ ազգերու եռուզեռին մէջ սկսուած, եւ

օտարներու կողմէ ալ այնքան սաստկօրէն յառաջ տարուած մրցակցութեան մէջ :

Այս նպատակին յաջողութեան համար հոգեւին պէտք է աշխատին հոգեւորականն եւ աշխարհականը, հարուստն ու աղքատը, իմացական ուժի եւ նիւթական ուժի տէր անհատներն հաւասարապէս (*) :

Այո՛, հոգեւորականը մեծ դեր ունի բարեգործելու լաւագոյն եղանակը իր ժողովուրդին սորվեցնելու գործին մէջ :

Եպիսկոպոսը, իբրեւ առաջնորդըն : դարձակ թեմի մը, իր գործելու եղանակովն եւ տարածած առողջ գաղափարներովը կրնայ սորվեցնել թէ ո՛րն է ամէնէն ստիպողական պէտքը՝ զոր լեցնելու համար ժողովուրդը հարկ է յատկացնէ իր լուծման :

Այս առիթը հիացումով կը յիշեմ Սեբաստիոյ հանգուցեալ ծերունազարդ Առաջնորդը՝ Տ. Պետրոս Եպիսկ., էապէս բարեպաշտ, սստուածափախ հոգի մը, հին դպրոցի աշակերտ Չերմեռանդ կրօնաւոր մը, որ սակայն 1896ի ահաւոր կոտորածէն ետքը չվարանցաւ նոյն քաղաքին վանքերուն եւ եկեղեցիներուն ոսկի եւ արծաթ բազմաթիւ անօթները վաճառելու, հաց տալու համար կոտորածէն մազապուր ազատուած անօթի որք եւ այրիներուն :

— «Կենդանի՛ տաճարները պէտք է փրկենք, անոնք կրնան վերաշինել միւսը», կ'ըսէր հոգեւորս ժողովրդասէր եպիսկոպոսը :

Մեր քարոզիչ վարդապետները, մա՛

(*) Գաղափարներու այս ընթացքին մէջ անկարելի է խորունկ երախտագիտութիւնով մը չյիշել Բարեգործական Ընդհ. Միութիւնը, սոյն ազնիւ նպատակին իրագործումին աշխատող լաւագոյն Մարմինը, որու հնգամսակին առթիւ կատարուած հանդէսին վրայ կը խօսուի քիչ մը անդին, հրատարակուելով մասնաւորապէս Եր. Աղամօնի Պէյի սրտացունց բանաստեղծութիւնը :

նաւանդ երիտասարդները, եկեղեցւոյ բեմէն կրնան տարածել ամէնէն առողջ գաղափարները՝ բարեգործելու նոր եւ լաւագոյն կերպերուն մասին. անոնք կրնան սորվեցնել թէ եկեղեցիին քով պէտք է անպատճառ փառաւոր կանգնած ըլլայ գպրոցը, թէ անոր ներքին բարեկարգութիւնը աւելի՛ անհրաժեշտ է քան նոյն իսկ նիւթական շէնքը, թէ գերազանցօրէն աստուածահաճոյ գործ մը պիտի ըլլայ աղքատիկ, թերեւս որք, բայց ուշիմ ու խոստմնալից պատանիներ առաջնորդել բարձրագոյն վարժարաններ եւ ի հարկին եւրոպական համալսարաններ, ուրկէ ի դարձին լուսաւոր ջահեր պիտի ըլլան գաւառի տգիտութեան խոր մութին մէջ: Վերջապէս անոնք կրնան բարեգործութեան մէջ իսկ տնտեսագիտութեան ոգին, քիչով շատ արդիւնք առաջ բերելու միջոցները պարզել ժողովուրդին, կրնան նոյն իսկ իրենց ողջութեանը մեծագումար նուիրատուութիւններով ազգին անպաշտպան որբերուն բարերարը հանդիսանալու պէտքը շեշտել, փոխանակ կըտակներով յետ-մահու բարեգործելու ընդունուած ձեւին, որ նուազ արդիւնաւոր եւ երբեմն ալ բոլորովին ապարդիւն կ'ըլլայ, աւաղ:

Մեր քահանաները, կրնան, ու պարտաւոր են, ընտանիքներու մէջ իրենց հովուական այցելութիւններու պահուն նոյն օգտաշատ գաղափարները տարածել:

Մեր հրապարակագիրները ու վերջապէս ժողովուրդին իմացական բոլոր վարիչները պէտք է ջանան բարեգործելու նոր ոգին եւ նոր եղանակը մտնեցնելու ժողովրդային ամէն խաւերու մէջ. եւ այդ սղղութեամբ եղած ամէն օրինաւոր ջանք գնահատութեան եւ շնորհակալութեան արժանի է:

Եւ սակայն, — հոս է կարեւոր

կէտն ուր կ'ուզենք յանգիլ, — այդ բոլոր ջանքերը պէտք է ի գործ դրուին շրջահայեցութեամբ: Յախուճն ոճով եղած քննադատութիւններ շատ անգամ բաղձացուած նպատակին բոլորովին հակառակ արդիւնք յառաջ կը բերեն:

Միշտ ի նկատի ունենալու ենք որ բարեգործութիւնները մեր մէջ, — ու կրնանք ըսել՝ գրէթէ ամէն ժողովուրդի մէջ — հոգեւոր շարժառիթ մը ունին իրենց: Բարիքը բարիքին հաւատ սկզբունքը տարածուած չէ ժողովրդագային խաւերուն մէջ: Ինքեղեցեանքու խիստ սահմանափակ շրջանակի մը մէջ կը հասկցուի ան, եւ, աւաղ, անոնք ալ ամէնէն աւելի բարեգործները չեն: Հետեւաբար բարեգործներու ստուար մեծամասնութիւնը կը կազմեն հաւատացեալները, անոնք որ հաւատք ունին յաւիտենական կեանքի վրայ, եւ կ'ուզեն այս աշխարհի վրայ իրենց բարեգործութիւններով եւ աստուածահաճոյ գործերով ձեռք բերել երջանկութիւնը յաւիտենական կեանքի մէջ:

Ասիկա գուցէ քմիւծաղ մը յառաջ բերէ նսրելուկ սկեպտիկներու շրթունքին վրայ, բայց չի դադրիր իրականութիւն մը ըլլալէ. այս այսպէս է, եւ այսպէս ալ պիտի ըլլայ, ցորչափ մարդ հոգի մը եւ հոգեկան պէտքեր ունի, ցորչափ անբացատրելի կը մընայ տիեղերքի կազմութեան մէջ, ցորչափ գոյութիւն պիտի ունենան կրօնքները այս աշխարհին վրայ:

Հետեւապէս, երբ կը տեսնենք բարեգործ մը, որ իր ըմբռնած եղանակովը կ'ընէ բարեգործութիւն մը, որ ըստ մեզ լաւագոյնը չէ, իրաւունք չունինք քննադատելու զայն: Կրնանք բարեկիրթ ոճով մը, առանց իր նուիրական զգացումները վիրաւորելու, թեւադրութիւններ ընել իրեն. բայց

ներելի չէ հեգնել, ծաղրել զայն, ո՛չ ալ երեսին զարնել իր տգիտութիւնը :

Մէկը եկեղեցի մը կը շինէ փոխանակ դպրոցի . ուրիշ մը հանգիստացած աղքատին լիաբուռն կ'ողորմի, առանց հարցափորձի թէ արդեօք իր այդ դըրամը ի՞նչ նպատակի պիտի ծառայէ, անօթի զաւակի մը հաճ տանելու թէ գինեպանի մը գրպանը լեցնելու . երրորդ մը եկեղեցիի մը տրծաթեայ խաչ մը կը նուիրէ, ճոխացնելով արդէն բազմաթիւ զարդեղինաց կամ սրբանօթներու թիւը, ու չի մտածեր թէ աղքատ դպրոցականի մը մէկ երկու ամսուան ուտեստը կամ գրեթե անակապիտոյքը կարելի էր հոգալ այդ դրամով :

Իրաւունք չունինք քննադատելու ատոնք, Անոնք բարիքը կը գործեն այնպէս ինչպէս որ լաւագոյն կը նկատեն, պէտք է դատարարակել զանոնք բարեգործութեան լաւագոյն ճամբուն մէջ . բայց մինչեւ այն ատեն պէտք է յարգել անոնց ըմբռնումը . պէտք է պատկառ կենալ անոնց կրօնական ըմբռնումներուն, հաւատքին որ միակ շարժառիթն է իրենց բարեգործութեան : Հակառակ պարագային, կը վախճանք որ բարեգործութեան արդէն հազուադէպ առնկը արմատէն կը չորցնենք :

Պէտք չէ մոռնալ, վերջապէս, որ այդ հաւատքը, այդ ոգին, այդ ըմբռնումն է որ մեր եկեղեցիները շէն եւ պայծառ պահելուն հետ մէկտեղ, կանգուն պահեր է մեր վարժարաններն ալ, որոնք այսօր բարեպաշտներու խոնկին ու մոմին դրամովը, ջերմեռանդ հաւատացեալներու՝ «ժամուն», — եւ ոչ թէ դպրոցին — նուիրած կալուածներու եկամուտներովը կը կառավարուին, կամ գոնէ կը հուսարակչուն իրենց մշտաբաց պիտոժէն :

Պէտք չէ մոռնալ որ մեր վանքերը

լոյսի վառարաններ եղած են հին ա. տեն, եւ նոր ժամանակներու մէջ ալ անոնք պատասխարան դարձան ազգին որբերուն . ու քիչ մը աւելի հոգածութեամբ ու լաւ մատակարարութեամբ այդ վանքերը — բարեպաշտական զգացումով մը հիմնուած ու պահպանուած այդ հաստատութիւնները — կըրնան լաւագոյն արդիւնքներ առաջ բերել ազգին իմացական, նաեւ տնտեսական կեանքին մէջ :

Պէտք չէ մոռնալ որ արիւնոտ դարերու երկարատեւ շղթայաւորումի մը միջոցին, եկեղեցին է եղած միակ ու զօրաւոր ապաստանարանը Հայուն ազգային գոյութեան :

Օ՛հ, յարգենք զայն, պատկառ կենանք անոր, խոնարհինք ակնածանօք այդ դարաւոր նուիրական Հաստատութեան եւ անոր ներշնչած գաղափարներուն եւ զգացումներուն առջեւ :

ԶԱՐԲԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ

Ս. ԳԻՐԳԷՆ ՅՈՒՐԵՐ

«ՍԻՐԵՍ ԶԻՍ»

(Յովհ. ԺԱ. 15, 17)

Առաքեալներուն համար ա՛լ կասկած չկար թէ Յիսուս յարութիւն առած էր իսկապէս : Մագդաղենացիին, իւղաբեր կանանց, Եմաւուսի ճամբորդներուն եւ Վերնատան մէջ Յիսուսի երեւումը փառատած էր պարզամիտ ձկնորսներու գանկին մէջ իրար խաչատող զաղափարները : Իրենց սիրելի վարդապետին կեանքը, նպատակը եւ վախճանը բացորոշ էր այլ եւս եւ երկբայութիւնէ վեր ընդորովին : Հրեշտակը աւետած էր յարութիւնը :

«Չէ՛ աստ այլ յարեալ» :

Ո՛չ փառայեղ տաճարին բեմէն արձակուած սպառնալիքն ու խիստ օրէնքը, ո՛չ ձեւական անսիրտ պաշտամունքով թրծուած դասակարգերու վճիռն ու սաստը,

ո՛չ օրէնքի սարսափն ու անգութ դատաստանը, ո՛չ մահատիւ թշնամանքն ու պժգանքը եւ ո՛չ ալ զժողային անտարբերութիւնը չէին կրցած լռութեան դատապարտել Աստուածորդին, որ իր հոգեպարար ձայնով անդունդի եղերքէն յետս կը կոչէր խելակորոյս մարդկութիւնը:

Այդ սրտառու ձայնով հագրի վերածնութիւնը կ'ուզէր Ան, մարդկային ու Աստուածային լաւագոյն զգացումներու այն մաքրիչ հուրը, որ պիտի հրդեհէր, այրէր, ոչնչացնէր մարդոց մոռելութիւնն ու մոլորութիւնը, հեռն ու նախանձը, արտաքին շոշոկանքն ու շոյանքը: Վերածնութեան այդ հուրը մոխիր պիտի դարձնէր ձեռական տաճարը, անսիրտ պաշտամունքը, եւ այդ մահու մեռելութեան աւերակներու եւ աճիւններու մէջէն, փիւնիկի նման պիտի յարուցանէր մարդկութիւնը, յաւէտ նոր ու անմահ կեանքով մը օժտելով զայն:

Յիսուսի միակ նպատակ-ծրագիրն էր այս, որուն թէեւ ուշ, բայց վերջապէս թափանցած էին այլեւս առաքեալները, վերջիշեւով յարութեան մասին Յիսուսի քօղարկուած խօսքերը եւ ականատես ըլլալով անոր յաճախակի երեւումներուն:

— «Յարուցեալ է Տէրն ի գերեզմանէն», անխախտ համոզումն էր այս առաքեալներուն: Անոնք համոզուած էին թէ ո՛չ հողը կրցած էր պարտկել վերածնութեան վեհ վարդապետը, եւ ո՛չ ալ «մեծ յոյժ» տապանաքարը կրցած էր ծածկել Յարութեան մեծ գաղափարն ու Անմահը:

Ու այդ Անմահին ծրագիրը իրականացած էր լիովին ու բառացի կերպով: Յարութեան գաղափարին հետ թրծած էր կեանքը, եւ Յարութեան մէջ պատկերացուցած վերածնութիւնն ու կեանքը:

Այս էր Առաքելոց վերջնական համոզումն եւ ըմբռնումը Փրկչին գործունէութեան նկատմամբ: Աշակերտները՝ պատմական այս անժխտելի եւ աստուածային վսեմ խորհրդաւորութիւններով լի՝ իրականութեան, այսինքն Յիսուսի յարութեան մասին առաւել եւս համոզում գո-

յացուցին Տիբերիոյ ծովուն երեքը, ուր «դարձեալ յայտնեաց Յիսուս զանձն իւր աշակերտաց իւրոց»:

Սուսմ մըն էին անոնք, Սիմոն Պետրոս, Թովմաս, Նաթանայէլ, Զեբեդեայ որդիքը եւ ուրիշ երկու աշակերտներ, որ հաւաքուած կարծիքներ կը փոխանակէին անշուշտ, Վարդապետին անուան շուրջ տարաձայնուած հակասական զրոյցներու մասին: Սիմոն Պետրոս կ'ընդմիջէ խօսակցութիւնը, ըսելով. «Երթամ ձուկն որսալ»:

Միւսները կը պատասխանեն. «Գամք եւ մենք ընդ քեզ»:

Զկնորսութիւնը իրենց երբեմնի սիրելի արհեստն էր. ուրախ եւ միանգամայն վարժ կերպով կը ջանան յաջող լաւ որս մը ունենալ. բայց ի դուր, «Յայնմ գիշերի կալան եւ ոչինչ»:

Առաւօտուն հազիւ թէ իրենց յոգնած ու խոնջած աչքերը բացած, ահա ծովեզերքին վրայ կը տեսնեն Յիսուսը, բայց չեն ճանչնար:

Յիսուս կը ձայնէ. «Մանկունք միթէ ունի՞ք ինչ ուտելոյ»:

Ժխտական կ'ըլլայ պատասխանը. — «Ո՛չ»:

Յիսուս կը հրամայէ նաւուն աջ կողմը նետել ուռկանը. «Արկին եւ ոչ կարէին ձգել ի բաղմութենէ անտի ձկանիցն»:

Պետրոս որ Յիսուսի մահէն առաջ աննկարագրելի սէր մը կը տածէր Անոր հանդէպ, կը զգար թէ «Տէրն է այն», եւ վայրկեան առաջ իր սիրելիին միանալու համար ծով կը նետուի: Միւս աշակերտները, զարմացած այս իրադարձութեան վրայ, «քարչէին զգործիսն հանդերձք ձրկամբն»:

Բռնուած ձուկերէն համեստ ճաշ մը կը պատրաստուի, եւ Յիսուս կը հրամայէ ուտել: Ծովեզերքին զալարիներուն վրայ սարքուած այդ ընտանեկան ճաշէն վերջ, Տէրը՝ Պետրոսի իրեն հանդէպ ունեցած երբեմնի սիրոյն աստիճանը փորձելու նպատակաւ՝ սրտառու չեղտով մը անոր կ'ուղղէ իր խօսքերը, բուն իսկ մականունը տալով:

— «Սիմոն Յովնանու սիրեմ գիս առաւել քան զդոսա»:

Պետրոս իր վշտին ու խորտակուած սիրոյն չափազանցութիւններուն մասնունում, շուարած ու շլմորած կը պատասխանէ:

— «Այո՛, Տէր, եւ դու գիտես զի սիրեմ գըհիւ»

Յիսուս, սիրոյ մթնոլորտի մը մէջ, երկու անկեղծ սիրելիներու միջեւ փոխանակուած անոյշ խօսակցութեան մը գոյնը կուտայ իր շեշտերուն «Միւս առաքեալներէն ալ աւելի կը սիրես ինչ»:

որովհետեւ Պետրոս պարծեցած էր իր անձնութեան վրայ, եւ յետոյ լքած ու ուրացած էր զՅիսուս (Մատ. ԻԶ. 33):

Յիսուս կը հարցնէ դարձեալ:

— «Արմոն Յովնանու սիրեմս զիս»:

Տէրը իր սիրելիներէն բաժնուելուն առթիւ վշտալից, իր սիրոյն մէջ երազուն եւ բաժանման պատճառաւ թափած արցունքներէն ու արձակած հառաչանքներէն պարտասած, վայրկեանէ վայրկեան Պետրոսի մէջ անկեղծ սիրոյ մը վերազարթնումը կ'ուզէր տեսնել:

Պետրոս գերագրգռուած ի՛ր վիշտերէն, ի՛ր սէրէն ու երազանքէն, կը կակազէ. — «Այո՛, Տէր, եւ դու գիտես զի սիրեմ գըհիւ»:

Ու իր պաղատագին նայուածքը կը սպրդեցնէ Յիսուսի վրայ. անկեղծօրէն սիրող ու տրոփող սրտէ մը արտաբերուած տաք արցունքներ կը թրջեն իր դէմքը, եւ տամուկ աչքերը զէպի գետին սեւեռած, կը վերելնէ իր երբեմնի ու արդի վիճակը: Յիսուս կ'երեքկնէ իր հարցումը:

— «Արմոն Յովնանու սիրեմս զիս»:

Մեծ վարդապետին այս երեքկնումը եւ տիրական շեշտը սարսուռ կ'ազդեն Պետրոսին. իր գիտակցութեանը մէջ խոր զարթոնում մը, սթափումի գերագոյն վայելք մը կը զգայ իր մէջ, բայց միեւնոյն ատեն արտմոլութեան նշաններն ալ կ'ուրուագծուին իր դէմքին վրայ. «Տրամեցաւ Պետրոս զի ասաց յնա երիցս անգամ թէ սիրեմս զիս»:

Պետրոս ա՛լ չի համարձակիր պնդել իր սիրոյն մեծութեանը վրայ, եւ ոչ ալ ապացուցել Տէրոջ հանգէպ իր ունեցած

զգացումին առաւելութիւնը. այլ անմիջապէս կը դիմէ Յիսուսի ամենագէտ զօրութեան եւ կ'ըսէ.

— «Տէր, դու զամենայն գիտես, եւ դու իսկ զամենայն ճանաչես, եթէ սիրեմ գըհիւ»:

— «Ասէ յնա Յիսուս, արածեա, զոչ-խարս իմ»:

Տէրը այս կերպով կը վարձատրէ իսկոյն Պետրոսի անկեղծ խոստովանութիւնը իր սիրոյն նկատմամբ, յանձնելով անոր իր գաղտնիները արածելու հոգն ու խնամքը . . . :


Սիրոյ այս ընտանեկան խօսակցութիւնը եւ մանաւանդ Յիսուսի որոշ ու ակնյայտի երեւումը Անոր յարութեան մասին վերջնական ու անխախտ համոզում մը կը գոյացնէ Պետրոսի եւ ընկերներուն մէջ: Այդ համոզման զգացումէն, եւ մանաւանդ իրենց սիրելի վարդապետին ներկայութեան ազդած ուրախութեանէն զվլիսած, հոգեկան տարբեր երեւոյթ մը զգեցած էին Առաքեալները:

Ուրախ էին ու զուարթ. որովհետեւ իրենց գրկին մէջ կը տեսնէին իրենց վարդապետը, զոր ժամանակէ մը ի վեր կորուսած էին: Հիմա մօտ կը գտնուէին իրենց սիրելիին, կը վայելէին զայն, ինչպէս երբեմն իրենց առաջուան սէրը զօրացած էր, թափ առած էր դարձեալ: Այժմ երկուստեք պէտք կը զգային նորէն սիրելու եւ սիրուելու, ու այդ անկեղծօրէն սիրող սիրաւոր իրարու միացած, անկեղծ սիրոյ անոյշ բոյրը կը սփռէին արեւելի վրայ, ուրկէ արբած էին այն հեշտանքով, զոր կը վայելեն երկու սիրակցորդ սերսեր, երբ օր մը զիրար տեսնելու եւ միմեկուրէն զուարթ ու բարեբաւտիկ վայրկեանները կ'ոգջուեն:

Ահ, ո՛ւր էր թէ ամէն մարդ անկեղծօրէն սիրել ու սիրուիլ գիտնար:

ՅՈՒՐԷՆ Մ. ՎՐԳ. ԳԱԼԵՄԵԱՆ

Կարիւն



ՀԱՅ ԼԵԶՈՒՆ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՒ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՐԵՐՈՒՆ

ՎՍԵՄ. ԽԱՅԻԿ ԽԱՆ ՍԱՐԱՃԵԱՆԻ

Ճշմարիտ գոհունակութիւնով կարգացի Տաճարի 1911 ապրիլ 16 եւ թիւ 14ին մէջ իմ մէկ թարգմանութեանս համար ձեր ըրած զիտողութիւնները:

Գոհունակութիւնով կարգացի, կ'ըսեմ, վասն զի ցաւելով զիտած եմ միշտ այն անտարբերութիւնը զոր ունին մեր գրեթէ բոլոր բանասէրներն եւ գրաբարագէտները: Ոսկեգարուն լեզուին գանձերը աշխարհաբարի վերածելու համար, կրնան շատ պատճառներ գտնուիլ այդ ընդհանուր անտարբերութեան, բայց ես կը կարծեմ թէ անոնցմէ հատ մը ամենէն աւելի կը կատեցնէ զիրենք. — Քննադատուելու եւ իրենց համբաւին հմայքէն կորուստ մը ընելու երկուդը:

Իրրեւ նորավարժ մը՝ գրական ասպարէզին, այդ երկուդը չէի կրնար ունենալ բնականաբար, եւ յսկուուն ձեռնարկեցի թրեւս, մեր դասական մատենագրութեան լաւագոյն կտորները թարգմանելու համար:

Այս յախուուն ձեռնարկիս ատեն երկու գաղափարներ ամենէն աւելի զիս կը զբաղեցնէին. մէկը այն՝ թէ ժողովուրդին երբէք մատչելի չեն մեր դասական մատենագիրները եւ նոյն իսկ Ս. Գրքը, միւսը այն՝ թէ մեր աղքատիկ գրականութիւնը կրնար պատուաւոր տեղ մըն ալ տալ գրաբարով հրատարակուած երկերու աշխարհաբար թարգմանութիւններուն:

Եւ կարծեմ թէ այս երկու գաղափարներէն զատ, քսաներորդ դարու հայերէն լեզուն ալ նուազ չափով օգտուէր թէ՛ հոս թուրքիոյ եւ թէ՛ հոն կովկասի մէջ, երբ օտար լեզուներէ թարգմանուածներուն հետ համահաւասար բաժին մըն ալ հանուէր գրաբարէն ըլլալիք թարգմանութիւններուն: Քիչ մը աւելի բացատրելու համար միտքս, աւելցնեմ անմիջապէս թէ

անպայման հարկ չկայ կապուիլ մեր մատենագրութեան նախախայրիքներուն: Ո եւ է գրաբար գործ՝ Ե. դարէն ըլլայ այն թէ, օրինակի համար, ժԹ. դարուն վերեւորի հրատարակուածներէն, կրնայ միշտ իր լաւագոյն թարգմանիչը ունենալ, եւ պէտք է անպայման իր աշխարհաբար թարգմանութիւնը ունենայ այլեւս: Ընդհանրացած սխալ կարծիք մը ունինք թէ՛ անպատճառ օտար լեզուներէ կամ արդի քաղաքակրթութեան ներկայացուցիչներէն քաղուած թարգմանութիւններ միայն կրնան օգտակար ըլլալ. իսկ անցեալի հայ լեզուն, հայ քաղաքակրթութիւնը եւ հայ կեանքը կը թողունք ամբողջովին պատմութեան եւ բանասիրութեան, որոնք՝ բռնադատուած ուսումնասիրելու ամէն ինչ որ անցեալին կը պատկանի՝ չեն կրնար մեր մէջ մասնագիտութիւններ ըլլալ: Միւս կողմէ, սակայն, չենք մոռնար անցեալ Հայութիւնով պարծենալու եւ աւաղելու ներկայ սերունդին վատասութեամբ, որուն պատասխանատու կը նկատենք մեր ազգին բնականոն կեանքէ չեղումը, այսինքն անցեալին չհետեւիլը եւ ինքզինքը հին Հայութեան շարունակութիւն չնկատելը:

Մասնաւորելով խօսքս հայ լեզուին համար, հարկ կ'այ արդեօք ձեռի յիշեցնելու թէ աշխարհաբարը այսօր պէտք է նկատուի կերպով մը գրաբարին եղափոխութիւնը (évolution): Անոնք որ կը ճգնին հաստատել թէ գրաբարին հետ միեւնոյն ժամանակ գոյութիւն ունէր աշխարհաբարն ալ, կամ աւելի ճիշդ է ըսել. կը պնդեն թէ հին եւ նոր հայերէնները հիմնովին տարբեր ծագումներ ունին, կարծեմ թէ տակաւին պէտք ունին ճգնելու, մինչեւ որ ո՞վ գիտէ քանի՛ տասնեակ տարիներ անցնին, եւ արդի հայերէնը ինքնիշխանութիւն մը ձեռք բերէ՝ ներկային համար խօսելով, պէտք է խոստովանիլ թէ գրաբարէ տեղեկութիւն չունեցող մը կարելի չէ որ հայերէն գիտնալուն վրայ պնդէ:

Ուրեմն եթէ կ'ուզենք որ հայերէն լեզուն լիով գիտցողներ շատնան ազգին մէջ, պէտք է կարելի եղածին չափ չու-

տով աշխարհաբարի վերածենք մեր հին մատենագրութիւնը. եթէ կ'ուզենք որ հայ ինքնատպութիւնը պահուի, պէտք է շուտով ծանօթացնենք ներկայ սերունդին՝ իր նախահայրերուն կենցաղը. եւ վերջապէս եթէ կ'ուզենք որ կարելի եղածին չափ հայ լեզուն իր տարրին եւ կալուածին մէջ մնայ, պէտք է աշխարհաբարի փողով յարութիւն տանք մեռած լեզուին։ Ապա թէ ոչ . . . : Մնացեալը կը թողու՛մ որ մեր անտարբեր հայերէնագէտները խորհին։

Գալով Եղիշէի «Տիկնայք փափկասունք» հատուածին թարգմանութեանս առթիով Ձեր ըրած գիտողութիւններուն, թէեւ կատարեալ վերծանում մը արտադրած ըլլալու յաւակնութիւնը չունիմ երբեք, բայց կարծեմ թէ տառացի թարգմանութեան համար Ձեր ցոյց տուած բծախնդրութիւնն ալ քիչ մը չափազանցուած է։

«Ոչ ոք ումեք անկողնարկ լինէր»ը — չեմ գիտեր թէ ինչպէ՛ս «ոչ ոք ոչ ոքի համար անկողին չէր ձգեր» կը թարգմանէք, քանի որ այնքան անախորժ կրկնութիւն մը ընելու չզգուշանալէ զատ, նկատի չէք առնել թէ «անկողնարկ լինիմ»ը պէտք է իբրեւ կրաւորական բայ թարգմանել։

«Բան գի եւ չճանաչէին իսկ զխոտեղէնսն ընտրել ի միմեանց, մի գոյն թխուլթեան փոխրայեցն եւ մի գոյն սեւութեան սնարից բարձիցն» հատուածը անմիջապէս կը չըջէք, թարգմանելով «անկողինն ու բարձերը չոր խոտէ էին եւ ա՛յնքան սեւ, զորս չէր կարելի իրարմէ զանազանել»։ Սակայն եթէ մեր աւելցուցած «մետաքսեղէն»ին չգոյութիւնը կը հաստատէք, գոնէ չէ՛ք կրնար հաստատել թէ ինչ պէտք ունէր Եղիշէ խոտեղէններուն մէջ «ընտրութիւն» մը դնել, զոր անշուշտ ուրիշ տարիներ Հայոց աշխարհի փափկասուն տիկիները կը ճանչնային։ Եթէ ձեզի լաւ չի թուիլ Հայ բամբիջներու անցեալ եւ այդ ատենի կեանքին մէկ բաղդատութիւնը տեսնել աս առկերուն մէջ, գոնէ ընդունեցէք որ կտակդէնին եւ չոր

խոտին մէջ չատ տարբերութիւն կայ։

Օշնանը չէք ուզած իբրեւ չեօյեմ ընդունիլ, եւ չէք ալ ըսած թէ ինչ նիւթ է. բայց արդեօք կը կարծէ՞ք թէ ե. դարու հայ կիներն ալ ի. դարու հայուհիներուն գործածած անուշահոտ եւ բերազան աւելօններն ունէին։

Սկուսեղին չափը կամ մեծութիւնը նկատի առնելով պնակ թարգմանած եմ. չէի կրնար երեւակայել թէ հայ աղնուականները ափսէներու մէջէն խմբովին կը ճաշէն՝ որ աւելի ընկերական խոհարհ զիբրի պատկանողներուն ճաշեկակերպն է, ինչպէս զինուորներուն։

«Բնակասնունդ դայեկաց»ը թարգմանելու համար, մեր «գորգաւրացող սընուցիչները» թէեւ Ձեր հաւանութեան չին արժանացած, բայց չեմ ալ գիտեր թէ ձեր «տունէն հասած, տունը մեծցած երախաններուն հոգ տանող» բացատրութիւնը իր ամփոփ ձեւին մէջ նոյն չէ՞ մեր թարգմանութեան հետ։

«Տոճար» սեղանասուն թարգմանելէ աւելի լաւ է՝ իր վիհութիւնը արտայայտող «ճաշասրահ»ը։

Իսկ զան, բասեռ միշտ լաւագոյն է կը կարծեմ միւսեք = բաղմոց թարգմանելով։ Երախանը՝ խրախճանութիւն չէի հաւկցած. բայց եթէ չէք ուզել հոս բերան, երախ, երախան թարգմանել, կ'ընդունիմ լաւագոյն համարիլ առաջին իմաստը՝ իբրեւ սեղան։

Բանի որ բասեռը շիշքե թարգմանած էք, բնական է թէ «գրգեալք» եւ զգուեալք»ն ալ «գիրգ եւ փափուկ պահուած եւ փայփայուած» պիտի հասկնայիք, վերանայով հայ տիկիներու մանկութեան ժամանակները։ Բայց մենք բասեռը՝ միւսեք թարգմանելով անոնց տիկնութեան միջոցին «հանգստացած եւ պաշտուած» կեանքը կը հասկնանք, առանց կովկասցի երանելի հայագէտին հովուերգութեան սահմանները մանկելու։

Չուարալ, ուղիղ եւ արիւն բառերուն համար ձեր ունեցած մասնագիտական հմտութիւնը հիանալի է արդարեւ, եւ լաւ է որ հայերէնը այդ կերպով կը ճոխանայ,

բայց գոնէ իմ մասիս խօսելով, անոնց այդ մասնաւոր նշանակութիւնները ոչ մէկ տեղ չէի հանդիպած, բառարաններու կամ ուսումնասիրութիւններու մէջ: Անկեղծօրէն շնորհակալ եմ ձեզմէ այս տեսակետով: Բայց ուղեղիմ ձեր առաջարկած ստուգաբանութիւնը կը կարծեմ թէ ընդունելութիւն չպիտի գտնէ:

Հնդկա-պարսկական բարբերու ըմբռնումը շատ ինչ տուժած պէտք էր ըլլալ մասնաւորապէս հայ ազնուականութեան շարքերուն մէջ, նոյն իսկ մեծն Ներսէս Պարթևի օրերուն: Հետեւաբար չուզեցի «նախապինք» նկատել հայ քրիստոնեայ կնոջ համար այրիութիւնը:

Վսեմ. Տէր, վերջացնելով նամակս, կը խնդրեմ որ հաճիք շուտով լոյս հանել ձեր ուշադրութիւնով պատրաստուած թարգմանութիւնները, որոնց մէջ մանրագին եւ ճշգրիտ բացատրութիւններ եւ լուսաբանութիւններ պիտի գտնուին անշուշտ մեր Ե. դարու բարբերը խառնող բառերուն: Ձեր միջավայրը եւ դիրքը կը ներեն այդ տեսակ թարգմանութիւններ ընել, եւ ձեր գիտողութիւններէն յայտնի է թէ անոնցմէ բաւական պաշար մը ունիք: Այդ պաշարէն անունդ տուէք հայերէն լեզուին, եւ պիտի ընդունիք միշտ յարգանքը Ազգին ու

Գ.Ա.ԶՐԻԿՈՆ

ԾԱԳՈՒՄՆ

ԵՐԱՅԱԿԱՆ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԵԱՆ

Ա.

Մովսէս, Դեբուրա (*)

Աւելորդ է անշուշտ կրկնել թէ՛ Խորայիլի նման խտապարանոց, բիրտ ու նախապաշարեալ ժողովուրդի մը համար շատ գծուար էր մէկ ոստումով արտադրել մարգարէական այն բարձր նկարագիրն ու բնութիւնը, որով պիտի ներկայանար ան դարեր ետքը: Յակոբի որդւոց

(*) Շար. Նախորդ (16րդ.) Թիւէն:

համար, անապատի աւազներուն մէջ ապրող Խորայիլի վրանաբնակներուն, անոնց համար որոնք Քանանու կռապաշտութիւն ժողովուրդին դէմ պիտի կռուէին զարկով, որոնք իրենց նուաճած ազգերուն նախապաշարումներն ու մոլեռանդութիւնն ունէին, անըմբռնելի էր անշուշտ ազնուացած ու վսեմացած մարգարէութեան մը բնութիւնը: Իրենց համար հասարակ ճեւաւնող մըն էր մարգարէն, ճեւաւնող մը՝ որ իրենց չտեսած ու չիմացած բաները կ'իմանար, որուն գիմելու համար. «Եկէք՝ տեսանողին երթանք» կը գոչէին բնագոգարար. քիչ մը դրամ, քիչ մը հաց Խորայիլի այդ տեսանողներուն վարձքը, իրաւունքը կը համարուէր(1): Ժշմարիտ մարգարէները կը չփոթուէին յաճախ իղձերու, երազատեաներու, այսակիրներու հետ (2), որոնց դէմ պիտի կրուի մարգարէութիւնը: Խորայիլի մարգարէները, սակայն, շուտով պիտի ներկայանան իրենց ինքնայատկութեամբ, իրենց յատուկ ոգիով ու ներշնչումով:

Ինչպէս մարգարէական գրականութեան մէջ ամենէն աւելի չատ գործածուած ու բնորոշիչ բառն ալ՝ նաքի՝ կը ցուցնէ, հրեայ մարգարէները, յանուն Եհովէի խօսող, Տէրջը ներշնչեալներն էին (3): Աստուծոյ պատգամները կը դրուէին անոնց բերին մէջ (4): Մարգարէն Եհովէի բերանը կը կոչուէ նոյն իսկ(5): Երբ Մովսէս կը ջանայ խուսափիլ Եհովէի դրած պարտաւորութենէն՝ իր խօսելու գծուարութիւնը յառաջ բերելով, կ'ըսուի անոր թէ իր հղբայրը՝ Ահարոն իր բերանը՝ իր մարգարէն պիտի ըլլայ, մինչ Մովսէս զայն ներշնչողը՝ Անոր Աստուածը(6):

(1) Ա. Թգ. Թ. 7, 8:

(2) Միք. Գ. 6, 7, Ովսէ. Թ. 7:

(3) Ովսէ. Թ. 7: Բ. Թր. ԺԳ. 1, 2:

(4) Բ. Թր. ԺԸ. 18, Ամով. Գ. 8:

(5) Երեմ. ԺԵ. 19

(6) Ելք. Գ. 16. Է. 1: «Եւ ասէ Տէր ցՄովսէս:

Ահա ետու զքեզ Աստուած փարաւորնի, և Ահարոն եղբայր քո եղիցի քեզ մարգարէ: «Եւ նա խօսեց ընդ ժողովրդեանն, և նա եղիցի քո բերան, և զու եղիցիս նմա յաստուածակոյս կողմանէ»:

Այսպէս, ուրիմն, մարգարէն, Իսրայէլի որդւոց համար նոյն իսկ, միջնորդ մըն էր Եանվէի ու անոր ժողովուրդին միջեւ, Անոր պատգամները կը յայտնէր մարդոց, Անոր դատաստանները կը հրատարակէր, Անոր կամբը եւ օրէնքնիրը կը հռչակէր: Այս տեսակէտով Աստուծոյ կամ Եանվէի մասին Իսրայելացւոց ունեցած գաղափարին հետ մէկտեղ ծնունդ կ'առնէր նաեւ երբայական մարդարէութիւնը: Պէտք չէ զարմանալ, ուրիմն, երբ Սամուէլի յայտնուելէն շատ առաջ Եանվէի մարգարէները ի հանդէս կուգան Իսրայէլի կրօնական պատմութեան մէջ, երբ անծանօթ տեսանող մը, «Աստուծոյ հրեշտակը», կուգայ ի Սելով քահանայական տան կործանումն ու Տապանակին գերումը յայտարարելու ծերունի Հեղիին (1), երբ դարձեալ ուրիշ անանուն մարգարէ մը կը զրկուի Եանվէի հանդէպ Իսրայէլի որդւոց ցոյց տուած անհաւատարմութիւնը նշաւակելու համար (2): Եւ վերջապէս պէտք չէ զարմանալ թէ Մովսէս եւ Ահարոն (3), Մարիամ եւ Դեբուրա (4) մարգարէական անուամբ կը յիշուին:

Մովսէս առաջին մարգարէն եղած է, եւ ապագայ սերունդի մը հաստատուն, անխփոփելի, հրախառնակ աւանդութիւնը փառաւորած է զայն այսպիսի անունով մը (5): Մովսէսի դերը շատ մեծ եղած է Իսրայէլի պատմութեան մէջ: Ոչ միայն ամբողջ Հեպթամտեանը, այլ եւ գրեթէ բոլոր հին ու նոր մարգարէները անոր գործունէութեան արձագանգն են, ու կը ճանչնան զայն ինչպէս առաջնորդ Իսրայէլի, նոյնպէս եւ ճշմարիտ մարգարէ (6): Եթէ ուղեինք վերցնել Մովսէսի ղէմքն Իսրայէլի պատմութենէն, բոլորովին անհասկնալի բան մը պիտի ըլլար

անսթերեւս այս է պատճառը որ քննադատութիւնն ստիպուած է խոստովանիլ եւ ընդունիլ Մովսէսի մը պատմական ստուգութիւնը, Մովսէսի մը որ Իսրայէլի որդիները Եզիպտոսէն հանելու գործին մէջ մեծագոյն բաժինն ունեցած էր, որ նոր կեանք մը, նոր կենդանութիւն մը տուած էր Յակոբի թափառիկ որդիներուն: Սինայի բարձունքներուն վրայ յայտնուող Եանվէի առաջին եւ ճշմարիտ միջնորդը եղած էր այդ մարդը: Եանվէն առաջին անգամ այդ մարդուն միջոցաւ սորվեցուցած էր իր անունը՝ «Որ էն» (1): Միակ եւ արդար Աստուծոյ մը գաղափարը, որ աշխարհն անձանթ եղած էր Փարաւոններու լուծին տակ կաշկանդուած անապատի այդ թափառիկ ցեղերուն, եւ որ աշխարհն հաստատուն գետին մը պիտի ըլլար ապագայ մարգարէական շէնքը կառուցանելու համար, Սինայի որոտումներուն հետ սկսաւ արձագանգել անոնց պակուցեալ սրտերուն մէջ:

Վրէժխնդիր Եանվէն, որ անողորմ ու անհերող պիտի հանդիսանար իր պաշտամունքը անդոնողներուն դէմ, որ արդար հալածանք մը պիտի յարուցանէր Բահաղներուն ու Մողղներուն դէմ, թերախներուն ու եփուտներուն դէմ, Ասդարտներուն ու Ելմուներուն դէմ, առաջին անգամ Մովսէսի ձեռքով մեծ սեղ մը կը գրաւէ Իսրայէլի խոտապարանց ժողովուրդին կրօնական ըմբռնումներուն մէջ: Ասով չենք ուզեր հաստատել, սակայն, ոմանց այն սխալ կարծիքը, որուն համեմատ Եանվէն Պաղեստինի տեղական եւ կամ քանոնական աստուածութիւն մըն էր, զոր Յակոբի զաւակները որդեգրած էին այն սահմաններուն մէջ հաստատուելէն ետքը: Ո՛չ, Քանանու տեղական աստուածներուն դէմ պատերազմելու եւ զանոնք ջնջելու համար, անոր պաշտամունքն ու կրօնական գաղափարը կարի արմատացած ըլլալու էր Իսրայէլի որդւոց մէջ, Քանանու երկրին տիրապետութենէն կամ արշաւանքէն ալ

(1) Ա. Թ. Բ. 27 ևն.

(2) Դատ. 2. 8:

(3) Ելք. 15. Միք. 2. 4, Ելք. ԺԸ. 15. Բ. Թր. ԼԴ. 10:

(4) Ելք. ԺԵ. 20. Միք. 2. 4. Դատ. Դ. 4:

(5) Beuss les Proph. T. I. P. 5:

(6) Ովսէ. ԺԲ. 13. Միք. 2. 4, Երեմ. Լ. 25. ԺԵ. 1, Բ. Թր. ԺԸ. 15:

(1) Ելք. Դ. 14:

ՕՏԱՐ ԷԶԵՐ

ԱՍՏՈՒԾՈՅ ԱՏՈՐՈԳԵԼԻՆԵՐԸ

չատ առաջ: Խնդրական եւ անընդունելի է նաեւ Ռենանի այն կարծիքը, որով կ'ուզէ ընդունիլ թէ, Եանվէի պաշտամունքը տեսակ մը անկում էր սեմական թափափիկ ու վրանաբնակ կեանքի կրօնական բարձր ու միաստուածեան ըմբռնումէն, էլ յոհիմներու «տարտամ» այլ վսեմ հայեցողութենէն, եւ որուն ճշմարիտ վերադարձ մը կը պատրաստեն Հրեայ մարգարէները, որոնք յանուն Եանվէի՝ Անոր բնութեան ու նկարագրին գէտ կը զինին, հետզհետէ կը մերկացնեն զայն նախանձոտ ու վրէժխնդիր Աստուծոյ մը բովանդակ տրնաւիրքներէն: Ստոյգ է թէ Աստուծոյ արդարութեան մասին մարգարէներու ըմբռնումն ու քարոզութիւնները հետզհետէ աւելի բարի ու վսեմ հանգամանքներով կը ներկայանան. մարգարէներու բերնով եղած աստուածային յայտնութիւնը կարեւա հետզհետէ կը բարեւշտուի, կը վսեմանայ, ժամանակին աստիճանական զարգացումներուն համեմատ. եւ սակայն չէ կարելի պնդել թէ Եանվէի պաշտամունքը անկում մըն էր նախկին կրօնական բարձր ըմբռնումէն: Ընդհակառակն աւելի բարձրացում մըն էր ան, նոր յայտնութիւն մը, որուն գլխաւոր միջնորդն ու գործիքը եղած էին սպանովաբար Մովսէս մը, Ահարոն մը եւ Մաւրիամ մը (1):

ԳԷՈՐԳ-ՄԵՍՐՈՊ

(Շարունակելի)

ՊՍՏՐԻԱՐԿԱՐԱՆ հասած հեռագիրէ մը սրտի յուզումով կը տեղեկանանք թէ Ղարզանի Սիլինա գիւղի եկեղեցին կողոպտուած եւ դպրոցը կրակի տրուած է Կեդրեբուր կողմէ: Այդ հեռագիրն անմիջապէս ներքին գործոց նախարարին ուշադրութեան յանձնուեցաւ, ուրիշ հեռագիր ուղղուեցաւ Պիթիլիի կուսակալութեան, յանցաւորները ձերբակալելու համար: Դժբախտութիւնն հոն է որ ցարդ ոեւէ յանցաւորի պատժուելու լուրը չէ հասած:

(1) Այս վերջին երկուքին դերը կը թուի նոյնքան մեծ ու նշանակելի եղած ըլլալ, որքան Մովսէսինը, որուն գերազանց գործունէութիւնը ստուերի տակ թողած կը թուի անոնց գործն ու մասնակցութիւնը. (Հմտել Միք. 2. 4):

Մարդկային միտքը, անկատար եւ սահմանափակ, չէ կարող ըմբռնել Աստուծոյ անհուն էութիւնը: Անհունը միայն կրնայ ըմբռնել անհունը: Եւ սակայն այս անձառ բնութիւնը բոլորովին թաքուն չէ մնացած մեզի: Գիտնալ թէ Աստուած մը կայ, կը նշանակէ արդէն խորապէս թափանցած ըլլալ անոր բնութեան: Այն Աստուածը որուն կ'առաջնորդուինք բանականութեան ուժով, չէ գրահաշուական տեսակ մը անծանօթ որուն հանգամանքը անորոշ մնայ մեզի: Չէ նաեւ կոյր տրամաբանութեան մը վերացական Աստուածը: Խղձի՝ Աստուածն է ան. պատճառներու Պատճառը, տիեզերական Բանականութիւնը. կատարելագոյն Էակը, միով բանիւ տիեզերաց Արարիչը եւ Նախախնամութիւնը:

Աստուծոյ այն ստորոգելիներէն զորս մարդիկ կարողացած են ըմբռնել, ոմանք ի յայտ կը բերեն իր լինելու կերպը, ուրիշներ իր գործունէութեան ձեւը եւ աշխարհիս հետ իր յարաբերութիւնները: Առաջինները կը հստակն Բնագանցական Ստորոգելիք, եւ վերջինները Ինացական կամ քարոյական ստորոգելիք:

Գլխաւոր բնականացական ստորոգելիներն են, միութիւնը, պարզութիւնը, անփոփոխելիութիւնը, յաւիտեականութիւնը, անհրաժեշտութիւնը:

1. Աստուածային միութիւնը ըսելով կ'իմանանք միակ Աստուծոյ մը գոյութիւնը: Այս վարդապետութիւնը յառաջ կուգայ նախ անհուն էակին գաղափարէն. որովհետեւ մէկ մէկու սահմանակից երկու կամ աւելի անհուն Էակներ փոխադարձաբար որոշ սահմանի մը մէջ պիտի գնէին իրենց անհունութիւնը, եւ հուսկ ուրեմն ընդգրկմութիւն յառաջ պիտի բերէին: Աստուածային միութիւնը կ'ըմբռնուի՝ երկրորդ՝ տիեզերաց կազմութենէն, որուն միաձեւ յատկագիծը, հաստատունն օ-

բէնքները կը բացատրուին դիւրաւ, եթէ սկզբնական շարժառիթը միակ է. իսկ անբացատրելի կը մնան ուրիշ ու է վարկածով :

2. Աստուածային պարզութիւնը կը կայանայ Աստուծոյ մէջ տարբեր մասերու չգոյութեան մէջ : Իր էութիւնը մարմինի մը նման չէ յօրինուած, միակ է և անբաժանելի : Մաս մը՝ սահմանաւոր իր մը կը ներկայացնէ . սահմանաւորը աւելնալով սահմանաւորին վրայ, չի կրնար յառաջ բերել անսահմանը : Սահմանաւոր և անսահման երկու հակընդդէմ եզրեր են, որոնց միջև ո՛րէն առնչութիւն գոյութիւն չունի : Արդ, եթէ Աստուած զանազան մասեր ունենար, այսինքն եթէ չըլլար պարզ, չէր կրնար ըլլալ անսահման : Անշուշտ կրնամ Աստուծոյ վրայ զանազան յատկութիւններ նշմարել, գոյութեան այն աստիճանաւորումին համեմատ, զոր ինք հաղորդած է իր արարածներուն . բայց այդ բոլոր ստորոգելիները միեւնոյն էակն են, որ մի է գերադոյն միութեամբ մը :

3. Աստուած անփոփոխելի է, չի փոխուիր բնաւ : Փոփոխումը յատուկ է սահմանաւոր բնութեանց, որ չունենալով գոյութեան լրութիւնը, միշտ տրամադիր են ըլլալու ինչ որ չէին նախապէս : Սակայն փոփոխումը անհամաձայն է Անհունի յատկութեան, որ չի կրնար ստանալ գոյութեան նորանոր աստիճաններ, որովհետեւ զանոնք ունի արդէն ի բնէ : Մարդուն մէջ գոյութեան հիմը միայն նոյնօրինակ է, իսկ անոր եղանակաւորումները՝ գաղափարներ, զգացումներ, կամեցողութիւն՝ կը փոխուին անդադար . ընդհակառակն Աստուած բացարձակապէս անփոփոխելի է, իր մէջ ամէն ինչ նոյն կը մնայ, գոյ է, կը խորհի և կը փափաքի միշտ միեւնոյնը :

4. Աստուած յաւիտենական է, սկիզբ չէ ունեցած և չպիտի ունենայ վախճան. եթէ իրմէ առաջ բան մը գոյութիւն ունենար, և կամ ինք վախճան ունենար, իրմէ վեր բան մը գտնուած պիտի ըլլար, և ինքը չպիտի կրնար ըլլալ տիեզերաց

սկզբնական և բացարձակ Պատճառը :

5. Աստուած անհուն է վերջապէս, այսինքն ամենուրեք ներկայ : Իր ներկայութիւնը չէ անշուշտ տեղական, մարմնական գոյացութեանց նման. որովհետեւ, ինչպէս կ'ըսէ Ֆենելոն(1), չունի մակերես մը որ շփման մէջ ըլլայ ուրիշ մարմնոց հետ . բայց նա կ'ոգեւորէ տիեզերքի բոլոր մասերը և զանոնք կը ընու իր իսկութեամբ, որ ըլլալով անհուն, չի կրնար պարփակուիլ միջոցի մը մէջ :

Աշխարհ և ոչ մին ունի այն ստորոգելիներէն զորս թուեցինք. ո՛չ մի է, ո՛չ պարզ, ո՛չ յաւիտենական, ո՛չ անհուն, ոչ ալ, մանաւանդ, անփոփոխ, որովհետեւ իր կեանքը ուրիշ բան չէ, եթէ ոչ շարունակական փոփոխում և յաւիտենական ձեւակերպում : Ուրեմն աշխարհ Աստուած մը չէ, և Աստուած տարբեր է աշխարհէն . հետեւաբար կը հերքուի սխալը Պրիւնտի (2) և Սքինոզայի (3) նման իմաստասէրներուն, որոնք նոյնացուցած են աշխարհը և անոր Արարիչը, և Արարչագործութեան մէջ կարծած են տեսնել միայն աստուածութեան գոյացութեան անհրաժեշտ ծաւալումը :

(1) Քամպրէի արքեպիսկոպոս, ծնած 1651 և մեռած 1715 ին: Ֆրանսացի դասական ժանթ հեղինակ. իր ժամանակին ուշագրաւ քարոզիչներէն մին էր, նշանաւոր մանաւանդ իր գորովադատ սրտով : Իր գործերուն գլխաւորներն են *Պոյութիւն և ստորոգելիք Աստուծոյ*, *Աղջկանց դաստիարակութիւն* և *Յեթմեայ արկած*. վերջին երկուքը հայերէնի ծարգմանուած :

(2) Իտալացի իմաստասէր. ծն. ի Նօլ, 1550 և մեռած 1600 ին : Ուսումը առաւ Բարիզ : Հռոմի մէջ պրոֆեսոր. Կալվինականութիւնը չընդունելուն համար .

(3) Հոլանտացի փիլիսոփայ. ծն. 1632 Ամսթերտամ, Հրեայ ծնողքէ, բայց երբ մեծցաւ, հրաժարեցաւ հրէութենէ և պարապեցաւ փիլիսոփայութեամբ : Ըստ իրեն՝ Աստուած գոյութիւն մ'էր, շինուած՝ անհուն ստորոգելիներով, որոնցմէ երկուքը միայն գիտներ. մեւծում և օճակաւորութիւն : Ըստ իրեն աշխարհ միացումն է՝ նաև այս երկու ստորոգելեաց և մարդ ամփոփում մը մտածման և տեսականութեան, ու վերջապէս Աստուծոյ և աշխարհի միջև միայն հայեցակէտի տարբերութիւն մը կայ : (Ծ. Թ.)

Եւ սակայն, համաստուածութեան գաղափարին անհեթեթութիւնը ա՛լ աւելի կարկառուն դարձած է մանաւանդ Աստուծոյ բարոյական կատարելագործութեանց ուսումնասիրութեամբ :

Բարոյական ստորոգելիք . — Ի նկատ առնելով Աստուծոյ գործերը, համայն տիեզերաց մէջ տիրող հիմնալի կարգաւորութիւնը, մեծութեան, բարութեան, իմաստութեան ցոլբերը որոնք տիեզերքին մէջ ի յայտ կուգան, մանաւանդ թափանցելով մարդկային խղճին խորը, — այն բարոյական տիեզերքին մէջ ուր Աստուած կը ցոլանայ աւելի որոշ և աւելի կատարեալ կերպով —, կարելի կ'ըլլայ մեզի՝ ըմբռնել Աստուածութիւնը բնորոշող գիծերը : Հաստ պարզ և միանգամայն շատ խիստ մեծոտ մը կ'առաջնորդէ մեզի այս ամենաբարձր հետազոտութեան մէջ : Երբ կը յաջողինք ստեղծութեան մէջ ըմբռնել ինչ ինչ յատկութիւններ, ստորոգելիներ, որոնք կատարելութիւնը կամ — ինչ որ նոյնն է — անհոնութիւնը, գոյացութեան լրութիւնը կը յատկանշեն, զանոնք կը փոխադրենք Աստուծոյ մէջ, մաքրուած ամէն անկատարութենէ, և զերծ՝ սահմանափակուելու հանգամանքէն : Այսպէս, կը յաջողինք Աստուծոյ բնծայել ազատութիւնը և զօրութիւնը, իմաստութիւնն և իմացականութիւնը, արդարութիւնն և բարութիւնը : Ահա, ասոնք են տնոր ամենամեծ բարոյական ստորոգելիները : Արտաքին աշխարհը և խիղճը ասկէ աւելի բան մը չեն տար մեզի, բայց այս ամէնը կ'ընծայեն մեզ :

Արտաքին աշխարհի գաղափարը, բառին ամենալայն առումով, ճշգրտօրէն տարրալուծուելով, զմեզ կ'առաջնորդէ երկու մեծ բաներու . — Ուժ և Օրէնք : Մնացեալ ամէն ինչ լոկ բներեւոյթ է եւ լոկ յարաբերութիւն : Արդ, ուժի եւ օրէնքի գաղափարը՝ անջատուած ամէն սահմանաւորումէ՝ զմեզ կ'առաջնորդէ բացարձակ իմացականութեան տէր զօրութեան մը գաղափարին, որ կարող է տիեզերքին մէջ յանձարիս ծաւալելու կեանքն ու կարգաւորութիւնը : Մարդ-

կային բնութեան հետազոտութիւնը, եւ աշխարհն իսկ — մարդկային բնութեան հետ ունեցած աղերսին մէջ ի նկատ առնելով, — ա՛լ աւելի կը ճոխացնեն այդ վսեմ գաղափարը, եւ գերագոյն ուժին վրայ կ'աւելցնեն ազատութիւնը, իմացականութեան վրայ՝ իմաստութիւնը, արդարութիւնը և բարութիւնը : Մեր խղճին խորէն քննելով, կը նշմարենք թէ Աստուած չէ միայն աշխարհներու ամենակարող արարիչն և կարգաւորողը . նա նախատիպարն է գեղեցկին և բարեոյն, ճարտարապետը՝ բարոյական տիեզերքին, վարիչը մեր ճակատագրին . դատաւորն ու հայրը մարդոց :

Աստուած տէր է գիտութեան : Ինչպէս չպիտի ճանչնար ինքզինքը, ինչպէս պիտի չճանչնար իր ձեռակերտ աշխարհը, քանի որ մեզի տուած է իմացականութիւն մը որ ինքզինքը կը ճանչնայ, որ կը ճանչնայ աշխարհը, կ'ըմբռնէ յաւիտենական և անհրաժեշտ ճշմարտութիւնները :

Աստուած տէր է զօրութեան : Այս զօրութեան միջոցաւ է որ ստեղծած է ամէն ինչ, ան է որ կ'ոգեւորէ բովանդակ բնութիւնը, ան է սկզբնապատճառը մեր բեղնաւոր գործունէութեան : Հոգին անտարակոյս ուժ մ'է, բայց հոգիին ուժը կը ծնի անհուն Իսկէն որ զօրութիւնը կը բաշխէ, անոր համար միայն որ ուժի աղբիւրը, լրութիւնը ունի իր մէջ :

Աստուած ազատ է : Եթէ ազատ չըլլար, նոյն իսկ մարդկութենէն խոնարհ պիտի ըլլար, որովհետեւ լաւագոյն է ազատ ըլլալ, իր անձին և իր գործերուն տէր, քան ենթարկուիլ անհրաժեշտութեան անյաղթելի լուծին :

Աստուած արդար է : Իր մէջ կ'անձնաւորի այն բացարձակ օրէնքը որ մեզ կը հրամայէ գործել բարին և խոյս տալ չարէն . օրէնք մը որ եթէ կիրարկուի, մարդուն համար առիթ է երանութեան, եւ եթէ ոչ՝ դժբախտութեան : Պարտականութեան օրէնքը եթէ անջատուէր Աստուածային արդարութենէն, պիտի ըլլար վերացական յղացում մը միայն, որ հեղինակութիւն չպիտի ունենար մարդկային անձնիշխանութեան վրայ :

Աստուած բարի է, գերազանցօրէն բարի: Բարին, այս աշխարհի մէջ, խառնուած է չարին: Բայց բոլոր անկատար, սահմանափակ բարիներէն գերի վեր, բանականութիւնը կ'ըմբռնէ բացարձակ, անխառն բարին: Արդ, այս գերագոյն բարին ո՞վ է, եթէ ոչ Աստուած, որ իր իմացական ստեղծութեան ի սպաս դրած է մտքի և սրտի վայելքներու բազմաթիւ աղբիւրներ:

Թարգմ. Ֆրանս. ՄԱԿԱՐ Հ. ԱՆՃԱՃԵԱՆ
Աշակեհոս Պետրոսեան Վրժ.ի

ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆ

ՀԱՌ Ե. ԱՂԱԹՕՆ, ՊԷՅԻ

Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան Ե. տարեդարձին առթիւ ի Գափիթէ տրուած դաշտահանդէսին մէջ, — դիւթական ժամանց մը՝ որու մասին երկու տողով տեղեկութիւն տուած էինք անցեալ շաբթու, — Վարդ. Ժողովի տեղեկագրէն քաղելով մէկ քանի պերճախօս Թուանշաններ ալ, — Կեդր. Ժողովի փոխ-ատենապետ Եր. Աղաթօն պէյ կարգաց ցնցող, զգայուն ճառ մը, զոր հանդիման կ'արտաբայէր Գափիթէի Լուսաբեր-Առեւէն, իր Թեալադրող գաղափարներուն, եւ Միութեան ոչնչանալու օգտաշատ նպատակին վրայ տուած ծանօթութեան համար: Բանախօսը, զերկ շնորհակալութիւն յայտնելէ ետքը Գափիթէի եւ ուրիշ ամէն մասնագիտ. մէջ Միութեան աջակցող պատուական երիտասարդութեան եւ Միութեան բոլոր անդամներուն ու համակիցներուն, հրաւեր կ'ուղղէ տիկիներուն եւս՝ բոլորուելու այս օգտաշատ Միութեան շուրջը (հրաւեր մը որ լսելի եղած է խկոյն): Յետոյ հետեւեալ կերպով կը շարունակէ խօսքը, պարզելով Միութեան գերազանցօրէն մարդասիրական հանգամանքը:—

Ի՞նչ է Միութեան նպատակը:

Միութեան նպատակը վսեմ է, որովհետեւ անիկա գերազանցապէս մարդասիրական է:

Երբ մեր աչքերը անցեալին վրայ նետենք եւ պրպտենք մեր Ազգ. Պատմութեան էջերը, ցաւ ի սիրտ կը տեսնենք թէ մեր քայքայումին պատճառը մեր անմիաբանութիւնն եղած է:

Այսօր իսկ, այսչափ տառապանքներ եւ դժբախտութիւններ քաշելէ վերջ, տա-

կաւին համերաշխ չենք: Մեր արգահատելի վիճակին օտարներ պատճառ բռնելու չենք. բուն պատճառը մեր մէջ տիրապետող անհամաձայնութիւնն է: Եթէ իրօք՝ իբրեւ նին ազգ մը ապրելու իրաւունք ունենալ կ'ուզենք, կրօնական, կուսակցական եւ ուրիշ այլ եւ այլ ճղճիմ հաշիւները մէկ կողմ թողլով՝ պարտինք ամենքս ալ ազգային միութիւնը խորհրդանշող Հայկական Ընդհանուր Միութեան սրբազան դրօշակին տակ համախմբուիլ:

Մեր եւ մեր Նախնեաց բնագաւառն եղող Հայաստան՝ աներեւակայելի հարստահարութիւններու եւ ամենասոսկալի բռնութիւններու լուծին տակ հեծած եւ հիւծած է:

Հայ գիւղացին, որ Հայ Յեղին բուն ոյժը կը կազմէ, եւ արդէն ամէն ազգաց ալ կենսական ոյժը կազմողն իր գիւղացին եղած է, Հայ գիւղացին, կ'ըսեմ, այսօր ո՛չ շնորհքով բնակարան, ո՛չ իրեն պէտք եղածին չափ հող, եւ ո՛չ ալ ափ մը հողը մշակելու բաւական սերմնացու, կենդանի եւ գործիք ունի: Պարտքի տակ կը ճնշուի. ինք, կինն ու զաւակները՝ բժշկի եւ դեղի չգոյութեան պատճառաւ՝ զանազան հիւանդութիւններու ենթակայ կը տանջուին, եւ անոնցմէ շատեր, Բնութեան սահմանած ժամանակէն շատ առաջ կը մեռնին: Հայ գիւղացին շատ անգամ անօթի կը պառկի, կիսամերկ է, այնպէս որ չարաչար կը տառապի ձմեռուան սաստիկ ցուրտերէն եւ շատ անգամ ալ սառած կը մեռնի:

Ահա այս աննախընթաց թշուառութեան պատճառաւ է որ Հայաստանի ժողովուրդը փոխանակ բազմամալու, տարուէ տարի կը նուազի, եւ այսպէս, հազար ափսոս, Հայ Ազգն ալ կը փճանայ:

Ձեզ օրինակ մը տամ:

Թուականէս քսան տարի առաջ, երբ տակաւին Պոլիս էի եւ երկրադարձական ընդհանուր քննիչի պաշտօնով էնկիւրիւ դաւառին դաշտերուն մէջ քննական պտոյտ մը կը կատարէի, հեռուէն նշմարեցի չորս փառաւոր ոսկեղծ մզկիթներով տաճկական մեծ գիւղ մը: Երբ գիւղին մէջ մըտ-

նեղով, ըստ սովորութեան մեծ մզկիթին սենեակն իջեւանեցայ, տեսայ որ ինձ ներկայացող գիւղացիներուն թշուառ վիճակը բնաւ չէր համապատասխաներ այդ հոյակապ գիւղին արտաքին երեւոյթին: Երբ հարցուցի թէ քանի՞ տնւոր էին, ինձ պատասխանեցին. «Ժամանակին այս մեծ գիւղը 500 տնւորէ աւելի ունէր, բայց աղքատութիւնն եւ անոր հետեւանքն եւ զոյգ հիւանդութիւնները կամաց կամաց փճացուցին ժողովուրդը, այնպէս որ այսօր 20 տնւոր մնացինք»: Եւ ես, թէպէտ ոչ իսլամ, մեր թուրք եղբայրներուն վրայ խորապէս ցաւեցայ:

Սիրելի եղբայրներ, ելէ՛ք անդամ մը Սրարատի դաղաթը եւ ձեր հայկական արծուի սուր աչքերով դիտեցէք ամէն կողմ. ի՞նչ պիտի տեսնէք:

Ամայացած գիւղեր, սեւցած պատերով մարած օճախներ, աւերակ ու աւերակ, եւ կիսամեռ թշուառ բնակչութիւն մը, յար եւ նման էնկիւրիի իսլամ գիւղին, եւ թէ ոչ ա՛լ աւելի վատթար:

Հայեր, ցաւ ի սիրտ պարտինք խոստովանիլ թէ Հայ Ազգի փճանալու վրայ է, զի աղքատութիւնը իր զաղաթնակէտին հասած է. շատ մը հայկական գիւղերու մէջ դպրոց չկայ: Հայ լեռնցի տղաքները բոլորովին անուս՝ խոր սոգիտութեան մէջ կէս վայրենի կը մեծնան: Նոյն իսկ շատ մը քաղաքներու մէջ ալ զբոսայտներ չունինք, եւ գտնուածներն ալ խղճալի վիճակ մ'ունին: Մէկէ աւելի կեդրոններու մէջ թշուառութիւնն այն ապօրինի հասած է որ Հայ այրը, Հայ կինն եւ Հայ աղջիկը մոռնալով կ'ապրին. մի մոռնաք որ դեռ 30 տարի առաջ Հայաստանցին մութացեալութեան ի՞նչ ըլլալէր գիտեր, եւ այսօր կատարեալ մութացեալ մը դարձած է: Շատեր այս պատճառաւ անբարոյականութեան եւ շատեր կրօնափոխութեան կը գիմն. ի՞նչ ընէին խեղճ Հայն ու Հայուհին:

Ահա, սիրելի հայրենակիցներս, մեր նախնեաց ծննդավայրին այսօրուան վիճակը. ի՞նչ է ասոր դարմանը. . . :

Նախ, իր մարդ, եւ երկրորդ իբր Հայ՝

մեզի համար ամենասրբազան պարտականութիւն մ'է Հայաստանի մեր թշուառ եղբայրներուն եւ քոյրերուն օգնութեան հասնիլ: Եւ ահա ասոր համար է որ թախանձագին կ'աղաչեմ որ ամէն Հայ փութայ այդ նպատակին նուիրուած Հայկ. Ընդհ. Միութեան գրօշակին տակ միանալու, իր կարողութեան համեմատ սատարելու Միութեան գանձահակին, որպէս զի կարենանք ազատել բնագաւառի տաւաբախտ Հայութիւնը վերահաս վտանգէն:

Թուրքիա հին ուշիմին օրովը բնականաբար գէշ աչքով կը նայէր Միութեան մարդասիրական գործելակերպին, մինչդեռ այսօր՝ Օսմ. Սահմանադրական ազատամիտ կառավարութիւնը հասարակաց Հայրենիքին մէկ մասին բարեօրոյմին աշխատող բարեգործական մարմնոյ մը վրայ բնական է որ լաւ աչքով կը նայի: Կառավարութիւնը որչափ որ բարեացակամ ըլլայ, չի կրնար իր միլիոնաւոր ժողովուրդին ամէն մէկուն պէտքերուն հասնիլ. կառավարութիւնը կ'ընէ ինչ որ կրնայ ընել. մեզ կը մնայ, Միութեան կը մնայ ինչ որ պէտք է ընել իր կարգին:

Եթէ Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան գրօշակին տակ միայն 100,000 Հայ համախմբուի եւ ամէն Հայ ամսական 5 զրշ. վճարէ, եւ կարծեմ ասիկա անկարելի բան մը չէ, տարուան մէջ 60,000 ոսկիի ահագին գումար մը կը գոյանայ: Եւ զիւրաւ կրնաք ըմբռնել թէ երբ ամէն տարի 60 հազար ոսկիի առատ աղբիւր մը հոսի Հայաստանի մէջ, ի՞նչ անհուն բարիքներ կրնան արաւորուիլ:

Այն երանելի օրն ամէն գիւղ կ'ունենայ իր վարժարանը եւ օգտակար հաստատութիւնները: Հայ գիւղացին, փոխանակ աւերակներու եւ գեանափոր սեղերու մէջ՝ բնակելու, կ'ունենայ իր առողջապահիկ եւ օգուէտ բնակարանը, իր այսօրուան դատարկ շահմարանը միշտ լեցուն կ'ըլլայ, թէ՛ իրեններուն եւ թէ իրեն կարօտ դժբաղիններուն ու հիւրերուն ինչի բուելու աստիճան. իր խոպան արտերը կ'արգաստուրին եւ առատ արդիւնք կ'ուտան,

զանազան ակտերու արիւնաքամ ճիրաններուն տակ տառապող այսօրուան դաւկաղէմ, կորաքամակ, ակտաթէտ Հայ զիւղացին այն ատեն պիտի տեսնենք քաջառողջ եւ հուժկու ձիոր ծուռ, աչքը մարած, տխուր Հայ մշակն ու բանւորը սիրտ պիտի առնեն, դիտինք բարձր պիտի բռնեն եւ իբրեւ մարդ պիտի ապրին: Քաղաքներու մէջ ալ արուեստներու նոր զարկ մը տրուելով՝ քաղաքացի Հայն ալ ի վիճակի կ'ըլլայ իր այսօրուան խղճալի կացութիւնը բարւոքելու:

Եւ եթէ անախորժ անակնկալներ չունենանք, կը հասկնաք ինչ ըսել կ'ուզեմ, Հայաստան՝ արդէն Բնութեանն օժտուած, 10 տարուան մէջ դրախտ կը դառնայ: Ուրեմն, Հայեր, եթէ հարազատ Հայեր էք եւ ձեր Ազգը կը սիրէք իրօք, ամբողջեք ձեր ոյժերը, ձեռք ձեռքի տուէք, սիրտ սիրտի մօտեցուցէք եւ միացե՛ք Միութեան միացնող միակ դրօշին տակ, որպէս զի ամէնքս կարենանք ժամ առաջ Հայութեան վիճակը թէ՛ բարոյապէս, թէ՛ տնտեսապէս, թէ՛ մտաւորապէս եւ թէ՛ ֆիզիքապէս բարւոքել, եւ զայն ազատել անխուսափելի քայքայումէն: Կը յուսամ բոլոր սրտովս, կը մաղթեմ բոլոր հոգւովս՝ որ այս խօսքերս լսելի ըլլան ամէն Հայու սիրտին, եւ քիչ ատենէն՝ Միութեան անդամներուն այսօրուան 4—5000 թիւը՝ 100,000ի բարձրացած տեսնելու առիթն ու ուրախութիւնն ունենանք. եւ այն երջանիկ օրն՝ եթէ տակաւին ողջ ըլլանք, այսօրուան պէս նեղոսի մշտադաւար ափունքներուն վրայ եւ այս խորհրդաւոր արմաւենիներուն շուքին տակ՝ նորէն միանալով մեծ հանդէս մը սարքենք, եւ մեր սիրտն եւ ցնծութեան տաղաղկներն արձագանդենք մինչեւ Արաբա՛ն եւ Եփրատի զրախտանման ափերը՝ սրտազին գոչելով. ԿԵՑՑԷ՝ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ, ԿԵՑՑԷ՝ ՄԻՈՒԹԻՒՆԸ:

ԵՐՈՒՍԵՂ Դ. ԱՂԱԹՕՆ

30 Ապրիլ, 1911.

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ԱԶԳ. ԺՈՂՈՎՈՅ անցեալ ուրբաթի նիստը, հակառակ քառամսեայ զաղարէ մը ետքը դուրսուելուն, մեծ շահեկանութիւն մը չունեցաւ: Իր զբաղումներն եղան ընդունիլ մէկ երկու երեսփոխանի հրաժարականը, լսել Երեսփ. նոր ընտրութեանց տեղեկագիրը, Ձեռնհասութեան Դիւանին նախաքննութեան յղել եկեղց. ութ երեսփոխանաց ընտրութեան տեղեկագիրը՝ այդ ընտրութեան մէջ օրինական թերութիւններ մատնանշուելուն վրայ, օրակարգ անցնել նոր Վարչութեան ընտրութիւնը: Ձկարգացուեցաւ Տեղապահ Ս. Հօր հոսմանայ տեղեկագիրը, Վարչութեան ներկայացուած չըլլալուն համար, եւ որոշուեցաւ յաջորդ նիստին կարգաւ իբրեւ նախազանական ուղերձ նոր նստաշրջանի Ա. նիստին: Դադարէ յետոյ Դիմաքոնեան Տ. Հմայեակ Արքեպ. գրաւոր եւ բերանացի կրկնեց իր հին առաջարկը՝ Հայաստանի եւ հայաբնակ ուրիշ վայրերու մէջ կատարուած հարստահարութեանց եւ բռնաբարմանց վերջ տրուելու համար կառավարութեան հանդիսաւոր դիմում մ'ընելու մասին. բաւական բռնոյն վիճաբանութիւններէ ետքը, Ժողովը որոշեց Վարչութեան տեղեկագիրը լսելէ ետքը գործադրել կատարել:

ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ՀԱՅԵՐԸ.— Պատր. Փոխանորդ Տ. Դեռնդ Մ. Վ. Դուրեան Բչօր տեսակցեցաւ Պուլկարաց ղեսպանին հետ Պուլկարիոյ Հայոց համար հաստատուելիք առաջնորդութեան նկատմամբ: Բացատրեց թէ անոր նպատակը գլխաւորաբար եկեղեցական է, քարոզչական, քահանայական, ամուսնական եւայլն: Կարծիքներու փոխանակութենէ ետքը, ղեսպանը պահանջեց որ Պատրիարքարանին իր տեսակէտները յիշատակագրի ձեւով մ'ալ ներկայացնէ, որպէս զի իր տեսութիւններուն հետ զրկէ Սօփիա եւ նախարարական խորհրդակցութեան ենթարկուի, ճշտուելու համար այսպիսի առաջնորդութիւն մը հաստատուելուն պէտքը:

Արտօնատէր ՀՄԱՅԵԱԿ ՔԶՆՅ. ԷՔՍԵՐՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԶԱՐԲԱՅՐ ՔԶՆՅ. ԿԵՂԻՐԵԱՆ

ՏՊԱՐԱՆ Տ. ՏՕՂԱՄԱՃԵԱՆ

THE HISTORY OF THE
CITY OF BOSTON
FROM THE FIRST SETTLEMENT
TO THE PRESENT TIME
IN TWO VOLUMES
BY NATHANIEL BENTLEY
VOL. II.

THE HISTORY OF THE
CITY OF BOSTON
FROM THE FIRST SETTLEMENT
TO THE PRESENT TIME
IN TWO VOLUMES
BY NATHANIEL BENTLEY
VOL. II.

54000 I 64P

ԿԱՐԵՒՍՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԿՐՏՈՒԹԵՒՆ ՀԱՅՈՑ, ՎՐԱՑ, ԱԲ-
ԽԱԶԱՑ ԵՎ ԱԼԱՆԱՑ Ի ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻՆ:

— Հայ եւ զրացի ազգերու քրիստոնեայ
դառնալուն պատմութիւնը, որ բովանդա-
կելով հանդերձ Ագաթանգեղոսի պատմու-
թեան ընդհանուր գիծերը, աւելի սեղմ է եւ
տեղ տեղ ալ բոլորովին կը տարբերի անկէ
Ուսուցչապետ Պ. Ն. Մառ 1902ին Սինայի
Ս. Եկատերինէ վանքը այցելելու ատեն
հանդիպած է այս պատմութեան՝ արաբե-
րէն լեզուով՝ ձեռագիր, զոր լուսանկարած
եւ 1905ին հրատարակած է ուսերէն
թարգմանութեամբ, յառաջաբանով, վեր-
ջաբանով եւ մանրակրկիտ ծանօթութիւն-
ներով: Այս ուսերէն թարգմանութիւնն
է որ այս անգամ հայերէնի վերածած է
Էջմիածնի Միաբան Տ. ՅՈՒՍԻԿ ԱՐՔԵՊ.,
եւ Արարատի մէջ պարբերաբար հրատա-
րակելէ ետքը, առանձին հատորով հրա-
պարակ հանած է: Բանասիրական եւ
պատմական ուսումնասիրութիւններով
զբաղողներու համար մեծապէս շահագրգռա-
կան գործ մը, որ օգտիւ կրնայ կարգաց-
ուիլ ամէն հայու կողմէ: Գին 50 կոպեկ,
Տպագր. Վաղարշապատ, Մայր Աթոռոյ Ս.
Էջմիածնի:

ՈՒՐԱՐՏՈՒ ԿԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱ-
ԽԱԲՆԻԿՆԵՐԸ ԵՎ ԻՐԵՆՑ ՔԱՂԱՔԱԿԸՐ-
ՈՒԹԻՒՆԸ. — Քննական ուսումնասի-

րութիւն. — Գրեց ԴԷՈՐԳ-ՄԵՍՐՈՊ. —
Հայոց պատմութիւնը՝ աւանդական պատ-
մութիւնէն բոլորովին տարբեր, հին արձա-
նագրութեանց եւ գիտական նոր հետա-
զոտութիւններու վրայ հիմնուած: Ուշագ-
րաւ գործ մը, պատուարներ երիտասարդ
հեղինակին, զոր ամէնէն աննպաստ պայ-
մաններու մէջ, զուրկ ճոխ մատենադա-
րաններու ընձեռած զիւրութիւններէն,
յաջողած է ի գլուխ հանել: 216 էջ. Օ.
Արղունման մաքուր տպագրութիւն. — Գին
10 դր.

ՍՏԱՅՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ԳՐՊԱՆԻ ԲԱՌԱՐԱՆ ՅՐԱՆՍԱՀԱՅ. —
Գրեց Միհրան Յովհաննէսեան. — 40,000
բառ եւ ոճ. — Հրատարակութիւն Զար-
դարեան գրատան. — Գին 12 ու կէս դր.
Կիսալաթ, լաթակազմ 15 դր., կաշեկազմ
25 դր.:

ՊՈՒՏՏԱՅԻ ԱԼԵՏԱՐԱՆԸ, ըստ հին
արձանագրութիւններու Պատմուած Բօյ
Քերըսի կողմէ. թարգմանեց Ս. Հ. Քալ-
եօնճեան. — Հրատարակութիւն Գրլըճեան
գրատան: Գին 60 փարա:

ԸՆԴԱՐՁԱԿ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ ա-
ռաւօտեան եւ Ս. Պատարագի. — Ի պետս
մանկանց եկեղեցւոյ: Գ. տպագրութիւն
բարեփոխեալ եւ ճոխացեալ. — Հրատ.
Գրլըճեան գրատան: Գին 60 փարա: